


Համաձայնեցված է
Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարար կոմպլեքսային առընթեր պետական
եկամոսների կոմիտեի նախագահ
Վ. Գաբրիելյան Գ. Խաչատրյան



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

«ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ (ՀՕ-152-Ն) ՀԱՄԱՁԱՅՆ «ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ 4-ՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 5-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ պարբերության համաձայն պետական գրանցման վկայականը հարկային մարմին ժամանակավոր հանձնած և այդ ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած անհատ ձեռնարկատերը օրենքով սահմանված չափով նվազագույն սոցիալական վճարներ չի կատարում՝ վկայականը հանձնելուն հաջորդող ամսվանից մինչև վկայականը հետ ստանալու ամիսն ընկած ժամանակահատվածի համար:

«Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ պարբերությունը 25.07.2012թ.-ից ուժը կորցրած է ճանաչվելու:

Միաժամանակ, «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի (19.03.2012թ. ՀՕ-127-Ն) 2-րդ հոդվածի համաձայն անհատ ձեռնարկատեր հաշվառված անձանց պետական հաշվառման վկայականները ուժի մեջ են 25.07.2012թ.-ից հետո՝ 3 ամսվա ընթացքում:

Հաշվի առնելով վերը նշվածը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասով, **պաշտոնապես պարզաբանում են.**

1. Ձեռնարկատիրական գործունեությունը ժամանակավորապես դադարեցրած և մինչև 24.07.2012թ. ներառյալ վկայականները հարկային մարմին ժամանակավոր հանձնած անհատ ձեռնարկատերերը նվազագույն

սոցիալական վճարներ շարունակում են չկատարել՝ մինչև վկայականը հետ ստանալը կամ գործունեությունը վերսկսելը:

2. Ձեռնարկատիրական գործունեությունը ժամանակավորապես դադարեցրած անհատ ձեռնարկատերերը 25.07.2012թ.-ից սկսած չեն կարող վկայականները ժամանակավոր հանձնել հարկային մարմին և նվազագույն սոցիալական վճարները պետք է կատարեն օրենքով սահմանված կարգով: Նվազագույն սոցիալական վճարների չկատարման համար հիմք կարող է հանդիսանալ բացառապես գործունեության դադարեցման գրանցումը Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

3. Ձեռնարկատիրական գործունեությունը ժամանակավորապես դադարեցրած անհատ ձեռնարկատերերի կողմից հարկային մարմին ժամանակավոր հանձնած վկայականները 25.07.2012թ.-ից հետո՝ 3 ամիս անց ուժը կորցրած են ճանաչվում, որը հիմք չէ պետական գրանցամատյանում տվյալ անհատ ձեռնարկատերերի գործունեությունը դադարեցնելու մասին գրառում կատարելու համար: